



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 10

ՀԱՐՄԱՐԹ

5 ՄԱՐՏ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳՍԻԱՌԱՅ ՀԱՄԱՐ	ԱՐՏՍԱՆՈՒՄ
Տարեկան 50 Ղր.	Տարեկան 54 Ղր.	Տարեկան 12 Ձր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԺԱՌԱՑՈՐՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, ձեռագիր Պոլիսի խանին տակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեղիկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին :

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹՐ՝ քե՛
Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրիշ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով :

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիկի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են :


Հատր 40 փառս

ԱՐՏՈՆԱՏԵՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(صاريان) مطبعه — باب عالی جادوى ٣٨

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. ՍԱՐԸԵԱՆ

Կ. Պոլիս Պապը-Ալի անասկի քիւ 38



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ղանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
իւ տալտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Ե Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. ասոյն մեքենան ամենէն կատարելագործուածը,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՍԱՆՆԱԿԱՎԱՅՐՈՒՄՆԵՐ

- | | |
|---------|--|
| ԲՆԲՍ. | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ. | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ. | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13. |
| ՍԿԻՏԱՐ. | Զարչը Պօյու, թիւ 120. |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 և
343 կրկին, Տիւղօղլուի տունը:

ՖԻՆԱՆՍ ՕԹՐԻՇԻԷՆ


ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒՄ. 1860 ԻՆ. Ի ՎԻԷՆԱ.

ԿԵԱՆՔԻ ՃԻԻՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Ճրանգ



ՀՐԴԵՂԻ ՃԻԻՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 Ճրանգ

- ՖԻՆԱՆՍ** Հաւաքոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք և կարասիք:
- ՓԵՆՏԻՍ** Հաւաքոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնը մարդկային
կանքի վրայ:
- ՅԵՆԻՍ** Հաւաքոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ չոգենաւի՝ եւ ա-
ռագաստանաւի վրայ:

Ընկերութեան գրամատունն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասեն-
եակն է Պոլիս, Հաճօրուլօ խան, թիւ 52, 53, 54, 55, 56:

Ընկերութիւնս կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիազօր ներկայացուցիչ

Գ. ՖԵՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԴԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ Թ/ւ 10


ՇԱԲԱԹ

5 Mars 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ունեւոր մուրացկաններ . (Խմբագրական) . — ՎԱՀԱՆ ԹՕՇԻԿԵԱՆ : Կոչնակներ . (Բանաստեղծութիւն) . — ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՌԻ : Միւսն կասակ մը (Շար. եւ վերջ) . (քարգ.) . — ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼՊԱՆԴԵԱՆ : Խելացի հարսը (Պանքեզի) . — HIRONDELLA : Յուշաւորիս եղերէն (Պանքեզի) . — ՄԱՌԿՈՒԹ : Բարեկենդանի հօքեր (Շար. եւ վերջ) . — ԼԻԼԱ : Զուարթ ժամեր . — Զ. Մ. : 10,000 Տարի Սառնակոյի մը մէջ . (Հանրագիտակի քերթօն) LOUIS BOUSSENARD (Թարգմ.) Յ. ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ :

ՈՒՆԵՒՈՐ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐԸ



Հիմա որ Հարսնիքներու եղանակը անցաւ և ամէն թաղ. Խորհուրդ. Առջի Պսակին կ'սպասէ հարսանեկան հանդէսներէն գոյացուելիք հասոյթներով իր եկեղեցիին քիչ կամ շատ բացերը գոցելու և կամ վերջապէս անոր յարատիւ պայծառութեան միջոցները ապահովելու համար , կ'արժէ որ յետադարձ ահնարկ մը նետենք ու տեսնենք թէ մեր ժողովուրդը ընդհանրապէս ո՞րքան սերտ վերաբերում մը ցոյց կուտայ , Պսակը կատարող եկեղեցիին հանդէպ ունեցած պարտականութիւններուն , և թէ այս պարտականութեան ըմբռնումները ի՞նչ չափով կը համեմատին իր ըրած պահանջումներուն հետ , ամէն անգամ որ հարսնետէրը եկեղեցիին դուռը ափ կ'առնէ իր Պսակին նախնական կարգադրութիւններուն մասին բանակցութիւններ կատարելու թաղ. Խորհուրդներու հետ :

Նախ և առաջ սա ըսենք թէ իրաւ է որ եկեղեցին իր պայծառութիւնը կրնայ միշտ ապահովել ժողովրդային լուսանելով, և սակայն անուրանալի է թէ նմանօրինակ պարագաներու մէջ եկեղեցիին ընծայուած նուէրները ո՛չ նուազ ամուր հիմերու վրայ կը դնեն անոր տարեկան պիւտճէն, ո՛չ նուազ արժէք ունին վերջապէս անոր ելմտացոյցը հաւասարակշռելու գործին մէջ:

Անգամ մը որ այս ճշմարտութիւնը ընդունինք, ալ տեղի չի՝ մնար քննելու թէ հարսանեկան հանդէսի մը առթիւ եկեղեցիին տրուած նուէրը ո՞րքան ուղիղ կը համեմատի անոր վառած շահերուն և մոմերուն քանակին և հանդէսին շքեղութեանը համար անոր տեսած բազմադիմի պատրաստութիւններուն հետ, որովհետեւ, օրինակներով խօսելով, եթէ հինգ ոսկի նուիրուի եկեղեցիին, անշուշտ եկեղեցին հինգ ոսկիի մօմ չէ՝ որ վառէ, և կամ անոր ամբողջութիւնը չէ՝ որ կը յատկացուի իր բոլոր ծախքերուն: Այլապէս՝ տրուած դրամը նուէր ըլլալէ պիտի դադրէր բնականաբար, ու եկեղեցին ու է հասոյթ մը չպիտի կրնար ունենալ այդ շքեղաշուք հանդէսներուն երեսէն:

Տրուած նուէրին չափն ու քանակութիւնը և փոխադարձաբար եկեղեցիին ընծայած պատիւներուն նիւթական արժէքն ու կշիռը ինդիր պէտք չէ՝ ըլլայ հետեւաբար, ու եկեղեցին իրաւունք ունի ամէն պարագայի մէջ, քիչ կամ շատ նուէր մը ակնկալելու իր ժողովուրդէն, երբ իր դռները լա՛յն կը բանայ իր զաւակներուն, մա՛նաւանդ անոնց հրճուանքի և խայտանքի առիթներուն:

Իրականութեան մէջ սակայն, ժողովրդային ըմբռնումներու հակադարձ հոսանք մը կը տիրէ դժբաղդաբար, ու ինչպէս փորձերը ցոյց կուտան միշտ, տեսնուած է որ հարսնետէրերէ շատեր իրենց պսակադրութեան հանդէսներուն առթիւ, եկեղեցիին ու է կամաւոր նուէր մը չը տալէ զատ, գոնէ իրենց պահանջումներուն համեմատ անոր ըրած ծախքերն ալ չեն ուղեր վճարել, ստիպելով որ եկեղեցին, իր գերազանցապէս վերացականութեան մարմնացումով նիւթական շահեր չը փնտռէ ու բոլորովին ձրի՝ կատարէ իրենց հարսանեկան հանդէսները:

Եթէ այս առարկութիւնը ընողները սակայն աղքատ դասակարգի պատկանողներ եղած ըլլային, անշուշտ իրաւունք պիտի տայինք իրենց, ու իրենց հետ մե՛նք ալ պիտի պահանջէինք որ եկեղեցին ու է բան մը չ'ակնկալէ իրենցմէ: Եւ արդէն երբե՛ք լսուած է որ Հայ եկեղեցին պահանջկոտ գանուի ասանկներու հանդէպ և անոր մատակարարութիւնը ստանձնող Թաղ. Խորհուրդները անպատճառ ու է նուէր մը պահանջեն անոնցմէ, ինչպէս հարսանեկան, նոյնպէս ալ մկրտութեան և կամ յուղարկաւորութեան պարագաներու մէջ: Ընդհակառակը: Ամէն անգամ որ աղքատ ու խեղճ դասակարգին պատկանող մէկը ներկայացած է եկեղեցին, այս վերջինը ամէն դիւրութիւն ընծայած է անոր, և կատարելապէս արդարացուցած է իր ունեցած լա՛յն հայեացքները իր ժողովուրդին ամէն խաւերուն հանդէպ:

Դժբաղդութիւնը հոն է որ ընդհանրապէս այս առարկութիւններն ու պահանջումները ընողները, իրենց հարսանեկան հանդէսները թէ՛ շքեղութեամբ և

Թէ՛ ճրիագար կատարել ուղղոյնը ժողովուրդին քիչ շատ բարեկեցիկ դասակարգին կը պատկանին ու չեն ուզեր երբե՛ք եկեղեցիին ու է նուէր մը ընծայել, հոգ չէ Թէ գեղեցիկ վարդարանքներով ու բաց լանտօներով ներկայանան հարսնիքին օրը, եկեղեցին, հոգ չէ Թէ շատ մը աւելորդ ծախքեր ընելու յանձն առած ըլլան եկեղեցիէն դուրս, իրենց երեսներուն չնաչխարհիկ կաշիութիւնը ցուցադրելով եկեղեցիին պաշտօնեաներուն :

Բերայի եկեղեցիները այս տարի մանաւանդ հանդիսատեսը եղած են, ինչպէս լուր կուտան մեզի նոյն եկեղեցիներու Թաղ. Խորհուրդները, նմանօրինակ սլաակներնու, որոնք մեր ժողովուրդին տգեղ մէկ բարքը կը յատկանշեն, և ի վեր կը հանեն շահախնդրութեան աններելի չաղախով մը կազմուած այն աղտոտ ըմբռնումը զոր կը տածեն մեր ժողովուրդին ձեռքը բերանը հանող դասակարգէն շատեր, եկեղեցիին հանդէպ ունեցած իրենց պարտականութիւններուն մասին, ունեւոր մուրացկաններու արգահատելի մակդիրը իրենք իրենց տալով իրենց անուններուն :

Եթէ ցանցառ թիւ մը կազմէին ասոնք, եթէ սահմանափակուած ըլլար թիւը այս ունեւոր մուրացկաններուն, տարակոյս չկայ Թէ չպիտի արժէր խնդուկ նիւթ ընել այս տգեղ երեւոյթը, որ ամէն պարտաւարի մէջ, չպիտի դադրոյ միւս կողմէ դատապարտելի հանգամանք մը ունենալէ : Չպիտի արժէր, որովհետեւ բարքը իր տգեղութեանը մէջ ծաւալուն երեւոյթ մը առած չպիտի ըլլար, միւս կողմէ բարեբաղդութիւն մը ինքնին, քանի որ շատ դիւրին պիտի ըլլար կասեցնել նոյն իսկ՝ այդ ցանցառ թիւերուն հոսանքը :

Իրականութեան մէջ կը տեսնենք որ շատեր են այդ տգեղ երեւոյթը պարզողները, ինչ որ ա՛լ աւելի կը ծանրայնէ խնդրոյն կարեւորութիւնը, և գերազանցապէս արժանի կը համարէ նկատառութեանը ամէն անոնց, որոնք եկեղեցիին Թէ՛ բարոյական և Թէ՛ նիւթական շահերուն պաշտպան հանդիսացած են, և որոնք ամէն ձեռնհասութիւն ունին այդ տգեղ հոսանքին առաջքը առնելու համար ամէն բանաւոր տնօրինութիւն ի գործ դնելու :

ՎԱՀԱՆ ԹՕՇԻԿԵԱՆ

Կ Ո Ձ Ն Ա Կ Ն Ե Ր Ը

Հանդիսաւոր քրդիւններնիդ դառերեն,
Ձերդ պիտացողք, սիւքի մումունջ, կը հեծեծեն.
Ինչ կը սիրեմ ըզնե՛զ, խո՛ւր կոչնակներ.
Տըխո՛ւր, զուարթ, կը նախընտրեմ երգը ձեր:

Ձեր սրգերգն ալ, միօրինակ ծայրերգով,
Ձերդ հառաչներ, յոյլ մահազդակ, անխըռով,
Ձայն մ'որ կուլայ, շանթէ՛, ինկած մերք գետին.
Վիճիս վրայ վախիս մասնե՛րս կը սառին :

Տօն օրերու նըւագը ձեր փառաւոր,
Դաճակաւոր սաղմոս, յորդոր ու աղուոր,
Համը՛ր փողերգ, ձայնաւարն է երգերուն,
Որ խիկն կուսայ մեր սիրտերուն բաբախուն :

ՍԻՐՈՒՆ ԿԱՏԱԿ ՄԸ

(Շարունակութիւն եւ վերջ)

Հետեւեալ օրը, այսինքն այն օրը որ Պ. տը Մէօվէն այնչափ յուզումներ պիտի ունենար, Պ. տը Սէնթ Անտուէ ըստ բաղդի պտտկելով Ռիչլիէօ փողոցը եկած էր. որոշումն ժամէն կանուխ էր: Իր բարեկամին սիրբբիզ մ'ընելու նպատակաւ, Անկլըդէրի պանդոկը մըտնելու դադարաւոր ունեցաւ:

Պանդոկապետը անձամբ ընդունեց զինքը: Անհանգիստ, խռոված կերպարանք մը ունէր և պանդոկին ամբողջ պաշտօնէութիւնը խելակորոյս էին կարծես: Սպասաւորները չափազանց զբաղած զիրար կը հրմըշտէին սանդուղներուն վրայ, նրբացքներուն մէջ. դուռները կէս մը կը բացուէին և կը գոցուէին. ցած ձայնով տարօրինակ խօսակցութիւններ կը փոխանակուէին: Պ. տը Սէնթ Անտուէ զարմացաւ. սակայն ալ աւելի ապշեցաւ երբ, այս բոլոր շարժումներուն պատճառը հարցնելով, իմացաւ թէ ճամբորդ մը մէկէն ի մէկ հիւանդացած և մեռած էր:

Ի՞նչ ցաւալի բան! առողջ, ապագայի մասին մեծ յոյսերով անած երիտասարդէ մը բաժնուիլ եւ յետոյ քանի մը ժամ վերջը զայն նորէն, բայց անշարժ և պանդոկի անկողնոյ մը մէջ տեսնալ: Սակայն Պ. տը Սէնթ Անտուէ զինուորական կեանքին և պատերազմի բախտի հարուածներուն վարժուած էր և ասոր նման կանոնաւոր դէպքի մը առջեւ, չափէն աւելի չ'էր զգածուեր: Հետեւաբար միօրեայ ընկերոջը քանի մը ցաւակցական խօսքեր շնորհելէ վերջը, մտածեց թէ աւելի ազէկ կ'ընէր, եթէ անոր բարեկամական վերջին ծառայութիւն մը մատուցանէր:

Այս նպատակաւ ասպետին անտուկը բերել տուաւ, ժողովեց անոր ընտանիքին պատկանող գոյքերը, հագուստները և Պ. տը Մէօվէնի հասցէին գրուած նամակով միասին պզտիկ պատկեր մը քովը պահեց անձամբ տիրոջը յանձնելու համար:

Ժամ առաջ իր այս պարտականութիւնը կատարել ուզեց և Դրահուառի խաչին մօտ,

Սէնթ Օնօրէ փողոցը գտնուող Պ. տը Մէօվէնի տան ճամբան առաւ շիտակ: Դտնալու համար մեծ դժուարութիւն մը չկրեց: Բնակարանը պարտէզի խոշոր և ծանր դուռ մը ունէր որուն վերեւը արծաթէ երեք թռչուններու կտուցները պատկերացնող զինանշան մը կար: Սակայն պոչը կապուած դեղփին (dauphin) մը ներկայացնող պրծնող ուռնակը վեր վերցնելէ առաջ վարանեցաւ. իր պատգամաւորութեան դժուարութիւնները մէկէն ի մէկ աչքին առջեւ տնկուեցան, աս ալ ճիշդ գործելու վայրկեանին, և իր պաշտօնը պաշտածօրէն գլուխ հանելու միջոցներուն վրայ ինքզինքը հարցափորձել սկսաւ: Իրաւ է որ այս անստոյգ վիճակը կարճ տևեց և տեղի տուաւ բոլորովին զինուորական հաստատումը մտտութեան մը, որով ուռնակին բաղխումովը դրդեցուց դրան հաստակուու կազմիէ փեղկերը:

Դունապանը որ կարծես առաջուց կ'սպասէր այս նշանին, անմիջապէս փութաց, հասաւ, ներս առաւ երիտասարդը և առանց բառ մը արտասանելու, սակայն ամենախոշորին յարգանքի արտայայտութիւններով զայն ընդունելութեան բակէն առաջնորդեց մինչեւ դաւիթին վրայ նայող մեծ սանդուղը: Հոն դունապանը զայն սպասաւորի մը, խոշոր սատանայի մը յանձնեց որ անունը տալու ժամանակ չձգելով, առաջնորդեց զայն և մինակ թողուց բաւական ընդարձակ և խիստ ճաշակով կահաւորուած ներքնասենեակի մը մէջ:

Պէտք է խոստովանիլ թէ Պ. տը Սէնթ Անտուէ օտարականի մը այսչափ ընտանեբար ընդունուելուն քիչ մը զարմացաւ. բայց խորհելով որ իր շնորհքով դէմքին կը պարտէր այս առաւելութիւնը, տարբեր բացատրութիւն մը փնտռելէ զգուշացաւ, քանի որ իր գտած մեկնութիւնը որոշ կը թուէր իրեն և արժանապատուութիւնն ալ կը գոհացնէր:

Արդէն այս մասին խորհրդածելու ալ ժամանակ չ'ունեցաւ, որովհետեւ քիչ մը վերջը սենեակին դուռը բացուեցաւ ճամբայ տալու համար ուրախ և գէթ մարդու մը, Պ. տը Մէօվէնի որ վրան վազեց և ամենէն առաջ «Փեսայ» կոչեց զայն, սրտին վրայ սեղմելով և անանկ ուժով մը որ քիչ մ'ալ, երիտասարդին շունչը պիտի բռնուէր:

Պ. տը Սէնթ Անտուէ կը զղջար և անուշի չփոթութեան մը զոհ գացած ըլլալը հասկնալով, խօսք առնել փորձեց. սակայն ծերուկը միջոց չձգեց, մեծարանքներ թափեց գլխուն, հասկնելով թէ զինքը տեսնելուն համար շատ գոհ էր, թէ անհամբեր կ'սպասէր իրեն և թէ կ'ուզէր զինքը անմիջապէս Տիկին տը Մէօլէնի և իր աղջկան ներկայանել որոնք զինքը ճանչնալու համար իրմէ նուազ փութկոտ չ'էին:

Աս ըսելուն պէս, իր կարծեցեալ փեսան քաշեց տարաւ Տիկին տը Մէօլէնի սենեակը:

«Հոգ չ'է! ըսաւ իւրովի երիտասարդը, կիներուն առջեւ կը խօսիմ: Աս անիծեալ շատախօսին հետ գլուխ չ'եմ կրնար ելլալ»:

Բայց Տիկին տը Մէօլէնի խոտադէմ կերպարանքը չքաջալերեց զայն: Իր շուարու մին շեշտուիլը զգաց, աւելի ուշ խօսիլ միտքը դրաւ և լուսթեամբ համակերպեցաւ այս խիստ կնոջ նորհած գիր'ընդխառնումին, մինչդեռ միւս կողմէն խիղճը կը չարարէր և կը յանդիմանէր զինքը՝ իր պաշտօնը կատարած չ'ըլլալուն համար: Գործադրութեան համար մնացած քիչ մը քաջութիւնն ալ մարեցաւ երբ յանկարծ երեւցաւ Օրիորդ տը Մէօլէնը որ համեստօրէն, աչքերը վար, բռնուն ըմբոստութիւն մը յայտնող դէմքի արտայայտութեամբ մը իրեն խոնարհութիւններ կ'ընէր: Աշխարհքին ամենէն աղուոր մաղերը ունէր, լիւա մորթի գոյն մը, հասուն կեռասի ձեւով փոքրիկ բերան մը:

Երիտասարդին ամբողջ ուշադրութիւնը այս հրապուրիչ տեսարանէն գրաւուած էր, երբ Պ. տը Մէօլէն զայն առաւ իր խուցը տարաւ, ինչպէս կ'ըսէր, լուրջ խնդիրներու վրայ տեսակցելու համար. և արդարեւ սկըսաւ նոտարի ոճով մը թուանշաններ համրել և իր աղջկան օժիտը մանրամասնօրէն բացատրել:

Այն ատեն Պ. տը Սէնթ Անտուէ որ այս չափազանց նեղացնող կացութեան վերջ մը տալու համար կը բռնկէր կեցած տեղը, մէկէն ի մէկ գաղափար մը յղացաւ, այսինքն քանի որ նա խեղճ Դրասիի ասպետին դերը կը խաղար, հարկ էր որ ժամը վեցին թաղուէր և հետեւաբար այս պատճառաւ մեկնելու ստիպուած էր: Դիտենք արդէն թէ ինչ եղաւ ասոր հետեւութիւնը և թէ այս տարօրինակ յայտարարութիւնը ինչ աղբեցութիւն ունեցաւ:

III

Երբոր Պ. տը Սէնթ Անտուէ իր պատմութիւնը աւարտեց, Պ. տը Մէօլէն, որ դեռ զարմացումէն ինքզինքը չ'էր գտած, սա հարցումը ըրաւ.

«Այսպէս ուրեմն, պարոն, դուք Դրասիի ասպետը չ'էք:

— Ինչպէս կրնամ ըլլալ, պարոն, քանի որ զայն հիմա թաղեցին. . . իմ անունս Պ. տը Սէնթ Անտուէ է և ուրախ եմ որ իմ անունս անծանօթ չ'է ձեզի:

— Արդարեւ, պարոն, լաւ ընտանիքէ էք. լաւ կը ճանչնամ ձեր հայրը որ պատուական սպանական մ'է:

— Պարոն, հայրս ձեզ շատ կը յարգէ, յարեց Պ. տը Սէնթ Անտուէ, և իրմէ ազալեցի որ գայ և իմ անունիս ձեզի խնդիրք մը մատուցանէ, խնդրանք մը զոր ձեր բարութիւնէն քաջալերուելով կը համարձակիմ անձամբ ներկայացնել ձեզի հիմակուրէն. . . Այս վարկեանիս ձեր օրիորդ աղջկան պատկերը կը բերէի. . . կ'արտօնէք որ զայն պահեմ քովս:

— Բայց, պարոն. . .

— Այդ իրաւասութիւնը ինձ տալը ձեր ձեռքն է: Ատով իմ իղձերուս ամենէն սիրելին կատարած պիտի ըլլաք: Օրիորդ տը Մէօլէնը խենդի պէս կը սիրեմ: Իմ մասին, եթէ Պ. տը Դրասիի դէմքին տակ կրցայ հաճելի երեւալ, կը համարձակիմ յուսալ թէ ես ինքս ալ միւսին ներշնչած զգացումներուն մասնակից պիտի ըլլամ:

Պ. տը Մէօլէն խոստովանեցաւ որ Պ. տը Սէնթ Անտուէ հաճելի էր իրեն, բայց թէ պարտաւոր էր իր կնոջը հաւանութիւնը առնել, ինչ որ արդէն անմիջապէս պիտի ընէր:

Աներեւութացաւ, և պէտք է մտածենք որ իր պատգամաւորութիւնը յաջողութեամբ պսակուեցաւ, որովհետեւ վերադառնալուն պէս Պ. տը Սէնթ Անտուէն ճաշարանը տարաւ ուր Տիկին Մէօլէնը, շատ յուզուած, երկրորդ անգամ ըլլալով գրկեց զայն:

Իսկ Օրիորդ տը Մէօլէնը կարմրեցաւ նախ, վասն զի լաւ կրթուած աղջիկ մ'էր, յետոյ ժպտեցաւ և վերջապէս լացաւ, ինչ որ ամեն ատեն, երիտասարդ աղջիկներուն համար, քաղցր հակումի մը խոստովանութեան մէկ ցոյցը եղած է:

Նորէն սեղան նստան, և օրը ուրախութեամբ վերջացաւ, հակառակ խեղճ Պ. տը Դրասիի գլխուն եկած փորձանքին: Կարելի է անոր մասին ալ խորհեցան որ ապուշ մը էր անշուշտ, ասանկ բոլորովին անյարմար ժամանակ մը մեռած ըլլալուն համար:

GUSTAVE HUE

(Թարգմանեց)

ՄԻԻՍՍԵԼ, ՆԱԼՊՍՆԵՍՆ

Գատրգիւղ

ԽԵԼԱՅԻ ԼԱՅՈՒՆ !

Օր մը, Տաղեցի մանչուկ մը սիրուն
Շա՛ս կը զարնրէի կոյսի մ'աչեւուն .
(Այս մասին չունի Տաղեցի յանցանք
Այս ախսն Աղամեն ամենա ստացանք :)
Ինչ կ'ընէ չ'ընէր, կոյսը կ'առնու կին ,
Ժամ կ'երթայ կապուիլ սիրած գառնուկին :
Բարեբախտ ամուլ . . . երեկ այն մանչուն .
Բիշ մը վերջ դո՛ւք ալ կը գիտնայ ինչուն ,
Պապէն ի դարձին , ժիր մէկ երիվար ,
Հարսը կը տանէր նեղ փողոցն ի վար ,
Ուր կը գտնուէր տունը փեսային .
Միւս հրաւիրեալք ալ ոտով կուգային :
Բայց , սա նախ քան թէ մեր Տաղեցի
Սովորոյթ մ'ունին չեմա՛ղ , գեղեցիկ .
Սա է որ՝ երբ հարսն փեսին տունն հասնի
Պէտք է որ դռնէն ձիով ներս անցնի :
Ուստի , երբ մեր հարսն նոյնն բնել ուզեց ,
Իր դիմացն ելաւ ւարդիկ մը շատ մեծ :
Ինչ ցոյց հասաւ մ'ունէր փառաւոր ,
Իսկ դուռը՝ խախտուլ ցած մէկ բարաւոր .
Այնպէս որ , յանկարծ , կոյսը ծաղկասի
Դրան հետ եկաւ նախաճաշ .
Ու մինչ շփոթած՝ անշարժ կը կենար ,
Ամբոյսն երթալով տուրք կը լեցար :
Հանգոյցն էր կենդան , բազում տուարին
Լուծում մը գտնել . . . խնդիր դժուարին :
Ծեր մը որ ունէր մեծ փորձառութիւն ,
Դոչեց «Կտեցիք ոտերը ձիուն : »
Կ'ըլլայ . . . ինչո՞ւ չէ . . . ձայն կուտան տղոց
Որ երբան փնտռեն հասու մէկ սրղոց :
Ինչպէ՛ս ալ ասոր չէին մըտած ,
Մինչեւ ցարդ քափօրն բալը մըտած էր :
Հարսը ձիուն վրայ անշարժ կը սպասէր .
Ամօք է . . . խօսիլ պէտք չեն նոր հարսեր :
Տրղաք վերջապէս սրղոց կը բերեն .
Դործի կը սկսին ձիուն ոտերէն :
Բայց . . . կի՛ց մը մեկուն , կի՛ց մ'ալ մեկային ,
Ձին չէր համոզուեր , ա՛յս էր ցաւալին :
Վախն ու մտնուք ծայր կուտան նորէն .
Բոլորն իրարու նային տրտման :
Կոյսը՝ կուռքի պէս լրուիկ կը սպասէր .
Ամօք է . . . խօսիլ պէտք չեն նոր հարսեր :
Շատ տեղ համբուրած այլ մէկ հարսնեւոր
Բարձրաճայն գոչեց «Ըս իս , եթէ որ
Հարկ եղածին չափ հարսին նախաճաշ

Սանկ քիչ մը միայն կտեն , այն ատեն ,
Երկունք ալ դռնէն կը սղմին դիւրին : »
Ըսելիք չըկար . . . , խելացի հիւրին
Բովը կը փութան , ձեռքը կը բռնեն .
Ըսեմն ի՛նչ միտք , ամենք կը գովեն :
Ինչպէ՛ս ալ առաջ չէին մըտած ,
Մինչեւ ցարդ ամբոյսն ներսը նըստած էր :
Ձրլալիք բան չէ . . . հարսին նախաճաշ
Մաս մը . . . սանկ չորս մաս պիտի կրնաստեն :
Բայց , աւա՛ղ , հարսը այդպէս չի խորհիր
Վրասնոցին առջեւ ա՛լ եւս չ'որորի :
Կը նետէ մեկդի խիպն ու ամօք ,
Դեպի վար ծրուէ զուխն ու նարոյր ,
Եւ կասարելով մուտն աւանդական ,
Դռնէն ներս ձիով կ'անցնի յաղթական :
Ա՛լ «խելացի հարս» կոչեցին զանի ,
Եւ մեծ յարգանաց եղաւ արժանի :
Դո՛ւք իսկ չե՛ք բեր «Երեկ այն մանչուն»
Հիմայ որ գիտնայ , հասկըցաւ ինչուն :

HIRONDELLA

ՎԵՐԵՐԵԻՈՒՄ

Հանութեամբ կը զեկուցանենք թէ Մա-
սիս գրական շարժաթերթը որ կարճ ժա-
մանակէ մը ի վեր ինքնաբերաբար դադրած
էր հրատարակուելէ , անցեալ շարժէն սկը-
սեալ վերսկսած է կանոնաւորապէս իր շըր-
ջանը :

Խմբագրութիւնս ջերմապէս կը խնդակցի
իր պաշտօնակցին , այս ուրախառիթ երեւ-
ման համար ու ի սրտէ յարատեւութիւն կը
կը մաղթէ մեր գրական պարտէզին այս էն
տարեց մշակին :

Միւս կողմէ կը յուսանք որ գրասէր հա-
տարակութիւնը համակրութեամբ ու սիրով
պիտի վերաբերուի իրեն հանդէպ ու պիտի
ուզէ անոր յարատեւ գոյութիւնը մեր գրա-
կան բաղմատեսակ պարբերականներու շար-
քին մէջ :

ՅԱ. ԶՈՐԴ ԹԻԻՈՎ

ԱՅԱ ԹԵ ԻՆՉՈՒ ԶԵՍ

ԱՄՈՒՍՆԱՆԱՐ

ՄԱՌԿՈՒԹԷ

ՅՈՒՇԱՏԵՏՐԻՍ ԷԶԵՐԵՆ

(Յ Ա Ն Թ Է Զ Ի)

Երկուշաբթի

Յուշատետրիս էջերը չի բաւեցին նօթագրել այն բոլոր արտառօցութիւնները զորս ըրաւ եղաւ Քրիստոնեայ աշխարհը, սահող անցնող այն եռուզեռ շաբաթին՝ որուն Բարեկենդան անունը տրուած է Օրացոյցին մէջ։

Adieu խիպ ամօթ Wele came խայտառակութիւն։

Շատ անգամ ծնողք իրենց պղտիկներէն կը գանգատին, թուելով անոնց անառակութիւններու շարքը, անոնց անզուսպ կեանքին նորահնար արտառօցութիւններուն համար դիտողութիւններ չեն քաշուիր տեղալ մինչդեռ իրենք, բուն իսկ մեծերը ու տարեցիները քար կը հանեն տարւոյն այս մէկ շաբաթին մէջ ու այպանելի չեն դատուիր քանի որ Բարեկենդան է՝ այսինքն բացառիկ։

Պէտք է խոստովանիլ թէ Լիլա մը չեմ ե ոչ ալ անոր կարողութիւնը ունիմ գունագեղ նկարագրութիւնը ընելու այն բացառիկ պատկերներուն որոնք նկարուեցան ամբողջ ութ օրուան մէջ, Պոլսոյ արուարձանները մանաւանդ Բերա, բայց կրնամ աւելցնել թէ այս տարուան խրախճութիւնը բազմաթիւ մամբ ուրիշ նմաններուն, շատ աւելի էր շնորհիւ օգին, որ երբեք դէմքը չի կախեց, ինչպէս սովոր էր ընել նախորդ տարիներուն։

Եւ կը հարցնեմ հիմա Մեծ Պահք օրով այն ամէնուն որոնք պակաս չի մնացին այդ կարգի զուարճութիւններէն . . . Ինչ հասկըցաք։ Ու անոնք պիտի պատասխանեն, հասկցանք թէ, քնատութիւնը առողջութիւնը կը խանգարէ եղեր, թէ՛ վաստկիլը դժուար, իսկ ծախսելը մսխելը դիւրին է եղեր, թէ՛ շատ ցատկելը նեղ կօշիկներով մարդուս Մեծ Պահքի մէջ թէւիկով պտըտցնել կուտայ եղեր, թէ՛ մինչեւ լոյս Բերայի շիտակը սլքտկալը, էնֆիւլէնցան հրաւիրել ըսել է եղեր, թէ՛ արեւցողութիւնը ստամոքսի խանգարում յառաջ կը բերէ եղեր, թէ՛ ոսկին ծախսուած ատեն 108 իսկ վաստկուած ատեն 1008 զրուշ է եղեր։

Երանի թէ այս փորձառական խրատները մնային ամէն անոնց մտքին ու սրտին մէջ, որոնք սիրամարգներու պէս մտան Բարեկենդանի դիմակին տակ ու փետտուած հաւերու պէս անկողին մտան Մեծ Պահքէն աւելի ապաշխարանք քաշելու համար վերմակին տակ։

Երեքշաբթի

Քանի որ յուշատետրիս էջերէն Բարեկենդանի շաբթուան նօթերը կը քաղեմ, յիշեմ ձեզ նաեւ այս տարուան անակնկալ սիրաբոկները որոնք քիչ մը քիչ դաւեշտական չեղան ընտանեկան սալօններու մէջ։

Ամէնքս ալ գիտենք, համոզուած ենք թէ ամուսնութեան մէջ մայրերը բօգիթիֆ, հայրերը ցեկաթիֆ գաղափարներ կը տածեն հանդէպ իրենց աղջկան։ Սակայն բնութիւնը երբեք չի կենար երկու հակառակ եզրերը մօտեցնելէ, այնպէս որ երիտասարդներ միշտ պատենութիւնը կ'ունենան յարաբերութիւններ հաստատելու իրենց եթէ ոչ քսակակից գէթ սրտակից ուհիներու։

Այն կարգ մը փոթորիկի պէս խիստ ու կռաւիթի պէս ալ կարծր հայրերը որոնց բերնին մէջ կը կրկնուէր սա նախադասութիւնը թէ «Ոտքը կը կոտրեմ չունին . . . տունէս ներս մտնայ նէ, եւայլն»։ Եւ հա Բարեկենդանը եկաւ պապանծեցնել այդ կարգի խրատապահանջ ծնողքները, ու ծպտուն դէմքին տակ նոյն այդ երիտասարդները առօք փառօք ներս մտան այն տուններէն ներս, ուր արգիլուած էր իրենց մուտքը, ու հոն, զուարճացան, պարեցին, խօսուրուտեցան, կերան, խմեցին ու հայրիկին ալ քիթին հեծիլէ մը քաշելով, քաշուեցան հոնկէ, երկու ժամուան երազային հեշտ ժամանցէ մը ետքը։

Եւ կարելի է դեռ ըսողներ ըլլան թէ մենք աղջիկնուս բէշը անգամ պատուհանէն չենք ցուցներ, հէ՞ . . .

Զորեքշաբթի

Նօթերուս մէջ աչքառու տեղ մը բռնած են նաեւ պարահանդէսները։ Կարծեմ այս տարի մէկը չի մնաց որ գոյնզգոյն թուղթերով դափնիններով զարդարուած սրահներէն ներս չի մտնայ, ալեհեր վաճառականէն մինչեւ կրակին դէմ փքոց քաշող մուրտ կասու ջրախններ։

Գրեթէ ամէն ոք հոգի տուաւ որ պարէ, պարել գիտնային պարք . . . : Տակը բեկ-
ջիւի կոշտ կօշիկներով, սեւ մուրոտ օձիք-
ներով, կոշտ կապած ձեռքերով ու ցեխոտ
տաքատներով բոլբալին երեք ոտք վարնող
զիւալ միսիւններ չէին պակսեր գրեթէ ամ-
մէն գիշեր :

Լալ թէ խնդալ այսպիսիներու վրայ, ու-
րոնք բանէ պակաս չի մնալու համար կծիկ
մը շարաթականնին բերին մսխել վաճառ-
չինչի . . . հապա հեռաւոր արուարձաննե-
րէ տունով տեղով, պղտիկով մեծով Բերան
լեցնողները՝ որոնց մէջ պարահանդէսի սիրոյն
օրուան քօսթիւմ ֆիստանը աւելնող տօմիմօ
չինող ծուկներ չէին պակսեր . . . ինչ սէր
. . . ինչ սէր . . . :

Հինգշաբթի

— Ծօ՛ Լեւոնիկ, աս գիշեր կենանք . . . :
— Տունէն չիյտէն նէ . . . :
— Աման դուն ալ հայտէ կ'ընենք կըլ-
լայ կ'երթայ . . . :

— Էյ փարա . . . :
— Տասնը օխտը զրուշ, եռեսուն փարայ
ունիւմ . . . դուն . . . :

— Բասնեւրկու զրուշ :
— Տուտուիդ մատնին լէօպով մը չե՞ս
կրնար աչըրմիշ ըներ . . . :

— Ետքէն օտթան ելլա՞յ նէ . . . :
— Ետքը մտմտա նէ բան մընալ չես կըր-
նար ըներ, հիմա դուն սուտ հիւանդ եղիր

տուն գնայ, սանձի կընեմ կոր ըսէ, կոնակա
բռնուէր է ըսէ, հէմ ալ տուտուիդ ըսէ քի
կոնակա սապօն ջուրով չփէ տէյի, ան չփե-
լու ըլլայ . . . Ե՛հ . . . մատնիդ միսս կը

մտնայ կոր, հանէ տէ անանկ չփէ ըսէ, ան
ալ պիտի հանէ քովդ դնէ, ան առաւրիսը
աչըրմիշն կընես, տիոր քի անիկայ վար իշ-
նայ ձեռքերը լուայնէ դուն բանթալօնդ

քաշէ դուրս ինկիր . . . :
Այսպէս և ասոնց նման խելացի Դաւի-
թական նօթեր ալ քաղած եմ Բարեկենդա-
նի առթիւ, որոնք ցոյց կուտան թէ բուն
Բարեկենդանը զմարդ գլխէ հանելէ և չի-
տակ ճամբէն շեղեցնելէ զատ օգուտ մը
չունի :

Ուրբաթ

Ի մեջ այլոց կը նշմարուէին . . . :

Ահա յանկերգը, կամ լաւ է ըսել օրուան
նորոյթը լրագրութեան մէջ : Ո՛ եւ է հար-
սանեկան հանդիսի մը և մեռելական թա-
փորի մը ներկայ գտնուելու պատիւը ունե-
ցող ու է անձ հետեւեալ օրը նոյն օրագրու-

թեան մէջ ալ պիտի պատահի ի մեջ այլոց/
շարքին մէջ : Այս կէտը յուշատետրիս նիւթ
ընելուս պատճառը սա էական և զուարճալի
կէտն է որ, այս նորօրինակ ու մօտեմ style
գիտցողներ կամ կուսողներ սկսած են ոչ
թէ միայն բաներնին գործերնին ձգելով այդ
կարգի ընտրեալ հանդէսներու ներկայ գըտ-
նուիլ, այլ և կրցածնուն չափ աչքի զար-
նող տեղ մը թառիլ ու ուժերնին հասածին
չափ վիզերնին երկարել որպէս զի ի մեջ
այլոցի նօթագիրը գիրենք նշմարէ :

Արդ սա ալ չի մոռնանք յիշել թէ, աս-
կէ 5—10 տարիներ առաջ մեր հայ-լայն զա-
սակարգին մէջ աս կարծիքը կը պտըտկէր
թէ, դա՞գաղի մը՝ արճարաններու անկիւնը
կծկուած ծերուկները կը հետեւին, մինչդեռ
հիմա շնորհիւ ի մեջ այլոցին, ամէնուն աչ-
քերը պատերուն վրայ է ու է շրջանակներ
կարդալու և շունչերնին Աստուծոյ տաճարը
նետելու համար :

Շաբաթ

Երկուշաբթի առաջին օր Մեծ Պահոցին
առթիւ, ամէն խաչապաշտ քրիստոնեայք փա-
կեցին իրենց անյագ որկորը ու գոցուեցան
բերանները, բայց երանի թէ նոյն բանը կըրկ-
նէին իրենց սրտին ու բերաններուն համար :
Կիններուն համար խօսելով, անոնք կարծես
Մեծ Պահքին կ'սպասեն մեղքը մտնելու հա-
մար, բանաստեղծին աղէկը կը կատարեն և
խոյն, մինչդեռ չեն ուտեր խոյին : Հա-
գուած շքուած եկեղեցի կը վաղեն, ու դրա-
ցիին հագած մետաքսը կը շինեն քիւլի-
բագեմ :

Վերջապէս սա Մեծ Պահքի ապաշխա-
րանքի օրերը, որոնք աղօթքով ու սաղմո-
սերգութեամբ պէտք էր անցընել, զիրար կզե-
լով ու մեղաթաթալ կ'անցընեն առանց քա-
շուելու իրենց փոքրերուն չար օրինակ ցան-
ցընել :

Կիրակի

— Լաւ է դրամով աղքատ ըլլալ քան
թէ մտքով :

— Դժբախտութիւնը ձիւնի դնտակի կը
նմանի, որչափ գալարուի, այնչափ կ'ստուա-
րանայ կը մեծնայ :

— Կնոջ աչքը կատուինին պէս մութին
մէջ աւելի սուր կը տեսնայ :

— Երազը այն բաղձանքն է զոր մարդ
արթնութեան մէջ չի կրնար վայելիլ :

ՍԱՌԿՈՒԹ

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ՆՕԹԵՐ

(Շարունակություն եւ վերջ)

Մեր մէջ հին օրերէն մինչեւ այսօր այնպէս գիտցուած է որ զոքանչները իրենց փեսան կը սիրեն , սէր մը որ աւելի կեղծաւորութիւն մըն է , կեղծ գիմակ մը որպէս զի աղջիկը , հարսնուկը ալէկ նայուի , փայփայուի ու սիրուի : Բայց դժբաղդաբար կէճէսէֆա Ուստիկ բացառութիւնը կը կազմէր այս ընդհանուր օրէնքին ու հիմա փոխանակ փեսին իր աղջիկանը կողմը բռնելու , անկէկայ պաշտպանելու դժուարին կացութեան մէջ կը գտնուէր , վախճալով որ Նարդուկին անակնկալ այս արարքին մի գուցէ Օվրէստ աղա բռնի շալկէր զիրենք կղզիացնելով չոր ու ցամաք տանը մէջ : Ահա ինչու սոթթաւորած կէս գիշերուն դուրս ինկած էր խեղճ մայրը , որպէս զի բէշերովը ծածկէ արտառոց եղելութիւնը ու չարը մարի Ուստիկ՝ հակառակ իր կէճէսէֆա ածականին , կեանքին մէջ առաջին անգամը ըլլալով դուրս կ'ելլար կէս գիշերին և ընտելութեան զոհութիւն չունէր Բերայի գիշերուան կեանքին , մանաւանդ բարեկենդանի շարթուան մէջ :

Ինչպէս ընթերցողները կը յիշեն , զոքանչ ու փեսայ երկուքն ալ քառասուն աստիճան բարկութեան մէջ ներս կը մտնան Օտեօնի սրահէն , ուր բազմութիւնը խոնուած և խրախճանութիւնը չափէ դուրս ոգեւորութիւն մը առած էր այդ պահուն :

— Իշտէ շան զաւկին գալիք տեղը . . . մութլախ հոս է , տէ գտիր նայիմ . . . ըսելով Օվրէստ աղա մուշտա մը կուտայ զօքանչին ստիպելով որ առաջ անցնի :

— Վո՛ւյ չորնայ ծառքդ փառ կտրող . . . Իշտէ պիտի նայինք . . . փոստալները սուռաթնին ծեփեր ծածկեր են , ինչ գիտնամ որ չիֆթին մէջն է , դուն ալ քիչիկ մը խայրէթ ըրէ տէ սահաթ մը առաջ առջինիս ձգենք տէ տուն իյնանք :

— Աղէկ եա , դուն չիտե՞ս կոր ինչ ըսենիկ հագուեցաւ նէ . . .

— Ընէնկը վար աննի , դուռնէն ելլալը

պիլէ չի տեսայ . . . էյ բէք բէք ըլլայ նէ պաակին տակի կռօնը պիտի հագնի ասանկ տեղ . . . նայէ քի աթանճի Կարապետէն առած ճերմակ խումաշս կրնա՞ս տեսնալ . . . :

— Նազըլ Ֆիստան , ես ինչ գիտնամ , աթանճի Կարապետը կռօնը , խառնախառն . . . դուն է՞ն աշախ եղիր տէ եախալամիշ ըրէ , զէրէ խրոսէս տամայներս սիւլիւկի պէս խապաւմիշ կըլլան կոր . . . :

— Իմին ալ չըրվաթիս ինջաւ . . . նալէթ չըլլաք հէմէն , դող ելլալուս պէս աս խալթը կուտէ . . . :

— Լաքլաքիդ ձգէ տէ գործ տեսնանք , սա Սարսախեանէ ինչ է նէ աս հէրիֆը մէյ մը կտնանք քի քովինը պէլլի ըլլայ . . . :

— Պէ կէօզիւմ ինչ գիտնամ կայնէ նայիմ անկճին ետին խորէլէզի նշան մը ուսննալը գիտեմ ամա՞ . . . :

— Մախսուս կնես կոր քա . . . քեզի սուռաթը կը հարցունեմ կոր , դուն անկաճին ետին , կռնակին օւթան կըսես կոր , աս հազար հոգիին , անկաճը մուայէնէ՞ պիտի ընես քի որը նշանը է տէյի . . . էյէնմիշ կըլլաս կոր նէ ըսէ՞ տէ քեզի հետ ալ պաշլալենք . . . :

— Քա ճանըմ , թէրճան պըլըք տէլիխանը մըն է , մարը օխտն ամիսէն է պէրէր տէյի զայիֆ միճազ . . . :

— Նա սա հէրիֆին մէյմը չաթմիշ եղիր նայինք քովի կնիկը մերինին խալիպը կերեայ կոր . . . :

— Զէ ճանըմ գիտնալըս ադ շանդաւակն ալ սուռաթ դրաւ տէ երկուքն ալ մուշինայ եղան . . . :

— Էյ թամամ . . . նասլ պիտի գտնանք անանկէ նէ . . . :

— Քա ճանըմ ինչ ընես . . . խախտէի թէլֆէն նայելու տէ գտնալու չեմ եա . . . չօք շէյ իշտէ մէկիկ մէկիկ նայինք պիտի ուռումիդտէն . . . ըսելով կը հեռանայ փեսան քովէն ու աչքը կտրած զոյգի մը մօտենալով .

— Նառդոնկ . . . քա Նառդոնկիցա
դոնն ես . . . :

— Թի իփաթէ մատամա . . . կը պա-
տասխանէ մասքէն գլխէն մինչեւ ոտքերը
կոտորուելով . . . :

— Եռմուրճախին պէրանը երթաս բոս-
դալ, Նառդոնկս գիտցայ . . . :

— Բիմի առատընըզ մատամ . . . սիզին
քալալիէ . . . :

— Էյ ապրիս ինտո՞ր ալ գիտցաւ . . .
հէ եա քըզըմըն թեւինին իչինտէ բիւրիզ-
լէնմիշ իտիտէ քալալորիկինի պէն եաբ-
տըմ . . . :

— Նապըլ գըզ մատամա . . . սիզին գըզ
պուրտա՞ . . . :

— Հիմա երկան քարակ հասկցնելու չեմ
եա . . . չօք չէյ, իշտէ գըզըմ էվլի տիր տէ
կէս գիշերուն միւսիւ Սարսախ ըլան թեւ-
թեւի չըքտըլար, շիմտի իսէ կլխաւորը կը-
նիկիմ տէյի կլխումըն միսինի եէյօր . . .
հիմա ամէն բանին շիտակն ալ քեզի նախ-
լելու վախիթ չունիմ . . . :

— Թա ոա ոա պո՛ւմ տէռէ . . . Թա
ոա ոա պու՛մ . . . ըսելով ցատկաւտելով կը
մեկնին քովէն :

— Օռթերնիդ քիթերնէդ թափի հէմէն
չանդաւաղներ քի հիյօ պիյօներնուք՝ ինկեր
էք՝ տէ ինծի պէս սիրտը երած կնկանն ալ
հետը կիշնաք կոր ըսելով քիչ մ'ալ անդին
կ'երթայ :

— Պոյըդ սիրեմ եավրուս . . . քաւաւա-
թիդ կապիչները եախատ ի վեր թեւելէն մե-
նէ տղայ մը ըլլալդ հասկցայ տէ անոր համար
ճէսարէթ ըրի . . . մերինները կը ճանչնան :

— Բրտինքէս չապիքիս քօլան թուլցաւ
տէ անոր համար է մարիկս . . . ի՞նչ է ան
ո՞վ կուզես . . . :

— Վո՛ւյ արեւուդ կոտորտիմ եավրուս
նայէ, էն առաջ ըսելիքս չի մոռնամ տէ
սա հարցունեմ քի քօլաներըդ ո՞րի ընել կու-
տաս կոր եավրում . . . ատ ինչ թէնէքեար
պան կընեն կոր եղեր . . . :

— Նոյն ատեն փեսան, իրենց մօտենա-
լով . . .

— Ի՞նչ է ան ի՞նչ ըրիք . . . :

— Ծառուընքս սիրեմ . . . նայէ փե-
սիս քօլան, ութ օր չի փոխեր տէ թէք քի
տղտոտինէ պարակ սիւնկէրով մէջի աղտը
կառնեմ կճըռը պիւքմէ կէնէ կը դնէ կեր-
թայ . . . :

— Բա կնիկ խելքի՞դ եկաւ . . . ես կը-
նիկս կտիր կըսեմ դուն կայնէր քօլայի թէր-
թիպ կուտաս կոր . . . :

— Բա չէ ճանըմ, կը խափեն կոր տէ խիզ-
մըտանքիս տպաւ, հիմա՛ պիտի հարցու-
նեմ . . . քա եավրուս հոս տեղը աղջիկս
ըռաւտ եկածը հիչ . . . :

— Ինչպէ՞ս աղջիկ, դուք ո՞վ կըսուիք
տիկին . . . :

— Ձի ճանչնայիր . . . Փոս պըյըլի Արու-
թինին կնիկը կէճէսէֆան . . . դուն ո՛ւր
տեղացի ես քի . . . :

— Սամաթիացի տիկին . . . :

— Հա՛ . . . էյ երկու տարի մը Սամա-
թիա նստած ենք ամա . . . :

— Պէ կնիկ . . . կնիկս . . . կնիկս գը-
տիր հիմա պալօզը կլոխը կանցունեմ հա . . .
կ'ըսէ Օվրէստ աղա, որուն բարկութիւնը
գլուխը կը հրահրէր . . . :

— Կնկուիս հէմէն միսքին հէրիֆ . . . քա
ձգէ քի պան հասկնամ . . . :

— Ձեր աղջիկը մոռ՞տ է տիկին, . . . :

— Կետինը ասնի, հա եա մըսկոտ ալ է,
սանկ բէնճիրէ մը ելլայ նէ հէքչուն քիթն է
. . . պելքի ալ տակէն տէօչէնմիշ չեղաւ
ածէլէյով . . . :

— Ո՛չ . . . այսինքն գէ՞ր է թէ նիհար :

— Բա եավրում աս տողովս սիրտ չու-
նիմ պարակը բնտուելու . . . տիւզ խորաթէ-
քի ճուղապ տամ, Օվրէստ աղա դուն ալ
մէջ ինկիր . . . :

— Ես մէջ մտնամ նէ խառա կէլինճիկի
պէս ալ վալս պիտի ընեմ . . . կը հասկը-
նամ կոր . . . :

— Էյ եավրուս սանքի ի՞նչ կըսես չպիտի
կընամ կտնար աճապ, եանի ծուըն թէքէ-
լիս . . . :

— Ձեմ գիտեր թէ ձեր տիկինը նոյն այս
պարահանդէսին մէջն է, ո՛ր է վաւերա-
կան համոզում չի կըցանք գոյացնել, վասն
որոյ . . . :

— Աղնատըմ . . . հայտէ օլլում քիչ մը-
նալ պաշխա դպրոց դաս տուր . . . ղէրէ
մեզի պէս էրած սիրտերուն քու սուլու գը-
րաբառներըդ նիսպէթի պէս կուգան կոր . . .
ըսելով կը հեռանան մօտէն, միշտ աչքեր-
նին չորսդին իրենց կորանցուցած նազէնիմը
գտնալու շոշորդը վրանին :

— Դեղի բան մը ըսե՛մ, խօսք առաւ կէ-
ճէսէֆա տիկինը, դուն սօլ թառափէն պը-
տըտկէ ես սաղիս դառնամ, որերնիս կըտ-
նալու օր ըլլանք նէ, իրարու ծան կընենք...

— Մէտէթ քատուիլ խաղալ կուզէ կոր
հա՛ . . . խաղի՛ծ սուռաթլը ճատը . . . ին-
ծի կուգայ քի կոնակդ տաքցաւ տէ աշկդ
պան տեսաւ . . . կնի՛կս . . . կնիկս կու-
զէ՛մ քենէ, կուզես սօլ դառցիր կուզես
սաղ . . . կնիկս թէսլիմ ընելու է պօշ լա-
ֆերու պըլըս պուռմիշ ընելու վախիթ չու-
նիմ . . . :

— Պուռուշմիշ ըլլաս հէմէն օձի կոխ . . .
ըսելով կրկին կիյնայ իր փնտռտուքին ու այս
անգամ ալ զոյգի մը մօտենալով կսկսի ֆո-
թօկոագրին քաշելու պէս վերէն վար զըն-
նել :

— Կեցէք . . . չիւքէ մը ըրի, կեցէք նա-
յիմ . . . :

— Մատամ . . . կը ձայնեն դիմակաւոր-
ները . . . :

— Սուլանմիշ ըլլա՛նուդ սուրաթիւդ
պացէք նայիմ . . . զէրէ աշկս դարձաւ
ալթըիս . . . :

— Բաղտօն . . . :

— Համմէ . . . :

— Էսքը վու վուլէ տէթզը վիզավի ա-
վէք էօն ա՛մի . . . :

— Խնամի եմ հրամմերես . . . լեզուն
ալ դարձուց քի ֆառզին չերթամ քէյի հա՛,
ես եմ ծներնէ խառչ խառչ կիտեմ ըլիդ
ալ ճըլիւրդ ալ . . . :

— Սլօն տոնք լէսէ սէթ ֆամ էլ նը սէ
բա լա լանկ . . . :

— Լա՛նք . . . լանք եա՛ . . . լալու
պանէ չիտակը մարդ մարդու հալը չիյտէ
կէս գիշերուն ժամ կը կանչէ կըսեն . . . քա
արեւնուդ համար ըլլայ սուռաթիւդ պացէք
տէ սիրտս հանդարտի, ոտքերո ճուր ինջաւ
արթըիս . . . պէ՛ . . . :

— Վիէ՛ն բուբուլ, վիէ՛ն բուբուլ, վիէ՛ն
բուլաքի մու . . . ըսելով կը մեկնին, ա-
ռանց կարեւորութիւն տալու իրեն մինչ
Ուստիկ,

— Բուբուլն ալ վար ասնի դուք ալ, ը-
ռէզիլ շուներ . . . առջի վախդս ըլլալու էր
քի ձեզի հասկցունէի, աճապ թօփուխիս
կրնայի՛ք հասնելու :

Նոյն ատեն տիւրիօնը իրեն մօտենալով .

— Պանա պագիւնիդ մատամ . . . օռթա-
տա տօլաշմայիդ չիւնքիւ քատուիլ օյնա-
յաճագլար . . . :

— Աղջիկիմի պուլմատան պիր ոտկս տը-
չարը աթմամ, Նառդուհիցամը պուլայըմ,
կապես նէ չեմ կենար, դուն ինծի ո՛վ կիտ-
ցար . . . :

— Պիլէմէյօնըմ մատամ, բէճա իտէրիմ
լօճալարըն ալթընտա տուրունը :

— Լօնճայի հոտ չէ սէրսէմ շուն, ան ի-
մին հոտս է քիթիդ եկաւ . . . նասըլ լօն-
ճա, ան կնիկները լօնճան չըլըն կընեն չա-
մաշիրներնուն առան կը դնեն քի անուշ հո-
տին տէյի, ես ստանկ պան չունիմ . . . :

Տիւրիօնը կը հեռանայ մօտէն իրեն վե-
րաքերեալ մէկը չըլլալուն, ու մեր կէճէսէ-
ֆան կրկին մէջտեղը կը մնայ :

— Ան չէ՛ ամա Օվրէստէս աղան խայիպ
ըրի . . . քա ո՛ւր սըւ եղաւ . . . Ու հա-
զիւ իր աղջկանը տէրտին վրայ, փեսին կո-
րուստը կը մտնտար, զբօսանքը սիրող շու-
տիկին մէկը իրեն մօտենալով .

— Անկաթէ մատամ . . . կը հաճի՛ք քատ-
ուիլ մը պարել ինձ հետ . . . :

— Ի՞նչ կըսես ծօ՛, ո՛վ ես . . . :

— Ո՛հ . . . ձեր սեւ աչքերը շատ բան
կը խօսին, ձեր զգայուն սրտին նկատմամբ
որ համակ . . . :

— Մայթապըդ առտէ պաշիա կնկան վը-
րայ ցաթէ, զիւպպէ հէրիֆ, էյլէնմիշ կըլլաս
կոր . . . :

— Չէք գիտեր այն ջերմագին զգացում-
ներս որոնք թուի կառնեն, ձեր անուշ նա-
յուածքներէն սւ կզգլխեն զիս . . . :

— Ծօ խելքդ կըլիդ առ, տասնը վեց
տարի է էրիկմարդ տեսած չունիմ ամա, կէնէ
կուշտ աչք եմ, հոգդ մընէր, տէ գնայ բա-
նըդ կըսեմ կոր . . . :

— Երկինք վկայ խօսքերուս տիկին,
զգացման սաստկութիւնը և աչքի անուշու-
թիւնը տարիքի վրայ չէ . . . խնդրեմ մի
մերժէք, խնայեցէք ձեր ստրուկին որ ծըն-
րադիր ձեր առջեւ . . . :

— Ծօ ո՛րի կըսենք կոր վարժապետ խա-
ֆալը հէրիֆ, կնայ պանըդ . . . Ի՞նչ տէր-
տի հետ օղրաշմիշ կըլլամ կոր, աս ալ եկէր
հին տէֆթէրներ եօթլամիշ կընէ կոր . . . Ին-
ծի կէ՛ն կիտցար . . . :

— Իրան հանտացիր օտոմածի ֆառաշ . . .
աղ հիյէդովդ պալօ գալուդ, չորս արշըն
խառան պատանգուէ տէ խողը մտիր . . .
հա', հա', հա', հա' . . . ըսելով կծիկը կը
դնէ մօտէն, մինչ Ուստիկ . . .

— Օձի ծնունդ . . . անոր ասոր բի-
ճը . . . էօրաէք պաճախ շուն . . . ես քե-
զի չեկա՞յ մի . . . սա նայէ էյէնմիշ կըլլայ
կոր եղեր քա' . . . ախ . . . Նառգուկ
ծառքս ասնիսնէ քէթէն հէլվասիի պէս կզեմ
պիտի մազերըդ . . . բոստալ մը պուէքիմ
կ'ըսէ ու կրկին կ'սկսի իր փնտռուքին . . .

Պարահանդէսներու էն տաք ժամանցը
եղող պիւֆէները գիտէք, մանաւանդ Օ-
տէճինը որ վարը բեմին տակ պզտիկ պըզ-
տիկ նեղ խցիկներէ կը բաղկանայ. Արդ՝ մեր
կէճէսէֆա Ուստիանէն ճարահատ, բաղդը
կը բերէ որ անդգալաբար վար իջնայ ու այդ
խցիկներէն միտն դուռը ձեռք առնէ. Բաղ-
դը կամ սատանան գործ չունի կ'ըսեն. Ինչ
կ'ուզէք որ տեսնէ հոգ . . .

Տիկին Նառգուհին, իր Սարսախ կամ
Սարսախեան գալալիէին հետ քով քովի,
քարէ սեղանի մը մօտ գարեջուրի գաւաթ-
ները ձեռքերնին . . .

—

— Քա տուտու . . . խելքիս կուգայ
հիմա . . . Աստուած իմ . . . տուտու . . .

—

— Գարէջուր մը կ'առնէք տիկին մայր
. . . կըսէ Սարսախեան ոտքի ելլելով ի յար-
գանս իր տամային մօրկանը Ուստիկ տու-
տուն որ ջերմէ բռնուածի պէս ոտքէն մին-
չեւ գլուխը կը դողար կը սարսըսար . . .

— Քա տուտու ինչ է, ինչ եղաւ, ին-
չո՞ւ ելար եկար . . . նասըլ գտար մեղի
հոս . . . Օվրէստը ինչ ըրիր . . .

— Աստարը ըրիք եղա՞ք ես' . . . ճաղ
մը պերէք տէ իս տուն տարէք ղէրէ թա-
խաթս չի մնաց, օսկոռ տէրի դառցայ երկու
սահաթուան մէջը . . .

— Ներեցէք Տիկին, հանդարտեցէք . . .
եղածը ոչինչ . . . կրնանք մեկնիլ եթէ տի-
կինը հաճութիւն ցոյց տայ . . .

— Ծօ մախան պէճէյի սուրաթըլը պուէ-
քիմ . . . ծօ նասըլ ձէպարէթ կընես տէ ա-
նոր ասոր կնիկը պաղնիքի պօխճայի պէս
խօթուխդ կը զարնես ասանկ սողում դոմոր
տեղունք կը պերես . . . հէ՞ . . .

— Բայց տիկինը . . . բայց . . . բա՛յց . . .
տիկ . . .

— Տնկուէ շան սոււաթ, տէ դուրս նա-
յիմ, հիմա եախաղ ծառք կուտամ հա' . . .

— Քա տուտուս ամօթէ, տղան խապա-
հաթ չունի ճանըմ . . .

— Ծանրդ վար ասնի հէմէն, տէ առջիս
ինկիր նայիմ վոթկած բօսթալ, եկուր տէ
գլխաւորիդ մէրամ հասկցուր . . .

— Ուր է քի, ան հիմա խըռըլ խըռըլ
կը քնանայ կոր պէլքի . . .

— Պէլքի քեզ փնտռելէն քունը եկաւ
տէ դուրսը քանաթէյին վրայ երկնցաւ . . .
հո՞ս է հո՞ս . . . ծառքը չինկած պարէ տուն
սեւճրկէ . . .

— Մար չե՛ս քի . . . ինչ տէյի առջիդ
ձգեցիր հոս պերի . . . ճանա՛վար . . .

— Կերած ապուրը նայէ, էօմրիւս մէջը
ասանկ տիւպառալը շէյթան եուվասի տե-
ղուանքը ոտք դրած էի աճապա, ինք ծառ-
քովը դրածի պէս իս առջին ձգեց առաւ ե-
կաւ . . .

Վերջապէս չերկարելու համար անցած
խօսակցութիւնը, սա չափը միայն ըսենք
թէ, երբ մայր և աղջիկ սմբած հաւերու
պէս պարահանդէսին դռնէն դուրս ելլելով
կառքի մը մօտեցան, կէճէսէֆան խօսք առ-
նելով . . .

— Թաուլա պաշընա, ամա չափուք կէօ-
թիւր . . .

Մութին մէջ ձայն մը . . .

— Գարամա գարույու, պիր քիշի տա-
հա վար . . .

Հետեւեալ առաւօտուն Օվրէստ աղա հո-
վանոցը թեւին տակ առած Բերայի երկան-
քը տուններու դրան վրայ սա էթիքէթը կը
փնտռէր . . .

CHAMBRE MEUBLÉE A LOUER

ԼԻԼԱ

ՆՈՐ ԹԵՐԹ

Ստայանք Մեծ. Կարապետ էֆ. Քէլի-
եանի մէկ նոր պարբարական շարաթաթեր-
թը Տաճկերէն լեզուաւ ԶՐԱՍԹ ԿԱԶԷԹԱՍԸ
որ կոչում ունի ցաղկիլ երկրագործութիւնը
և անոր օգտաշատ մշակութիւնը . . .

Մեր ջերմ խնդակցութիւնը մեծայարգ
արտօնատիրոջ որ իր այս նոր ձեռնարկով
կուգայ մեծ պակաս մը լեցնել գրական հը-
րապարակին վրայ . . .

ԶՈՒԱՐԹ ԺԱՄԵՐ

Օր մը Տանտէր մը իրբեւ ընծայ եռեռուն-
երկու խոշոր ձմերուկ կ'անանայ բարեկամէ
մը . ու զանոնք իր մառանին չորս կողմը
խնայական հատ շարելով կը յանձնարարէ ծա-
ռային որ անոնց ձեռք չի դպցունէ : Զմե-
րուկները շարուած էին սա կերպով .

0	0	0	0	0	0	0	0	0
0								0
0								0
0								0
0								0
0								0
0								0
0								0
0	0	0	0	0	0	0	0	0

Ծառան սակաւն օր մը վերջը անոնցմէ
չորս հատը վերցնելով անանկ մը կը շարէ
որ երբ Տանտէրը մառանը կը մտնէ չորս կող-
մը դարձեալ իննական հատ ձմերուկ գըտ-
նելով՝ ամբողջութեամբ վատահ ետ կը դառ-
նայ . ինչպէս կ'ըլլայ ասիկա , տեսէք .

0	0	0	0	0	0	0	0	0
0								0
0								0
0								0
0								0
0								0
0								0
0								0
0	0	0	0	0	0	0	0	0

Կանցնին քանի մը օրեր և վարպետորդի
ծառան չորս հատ ալ կը շորթէ , մինչ միա-
միտ Տանտէրը նորէն չղգար ձմերուկներուն
պակսութիւնը՝ տեսնելով որ մառանին չորս
կողմը կը պահեն իրենց իննական ձմերուկի
ամբողջութիւնը , սա կերպով :

0	0	0
0 0	0 0	0 0
0	0	0
0 0	0 0	0 0
0	0	0
0 0	0 0	0 0

Խորամանկ ծառան քաջալերուած իր վար-
պետ գողութեան մէջտեղ չեղնելէն վերջին
անգամ մըն ալ կը վերցնէ չորս ձմերուկ և
պարզամիտ Տանտէրը դարձեալ չի կասկա-
ծիր տեսնելով որ ձմերուկները նորէն իննա-
կան հատ կը գտնուին մառանին չորս կող-
մերը : Տեսէք ինչպէս .

0 0	0 0
0 0	0 0
0	0
0 0	0 0
0 0	0 0

2. Մ.

ԱԶՔԵՐՆԻԴ ԼՈՅՍ

ԳՈՐԾԻ ԳԱՆԻՔ ՆՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Հագուիլ , շփուիլ եւ աղամանդներով
զարդարուիլ , ինչպէս նաեւ սան կա-
րասիներ կոկեյլ ամէն կերպով , առանց
հասկնիդ պարպելու

Ա Յ Լ

Ա Պ Ա Ռ Ի Կ

Մայր ես , աղջկանդ օժիտը կը մտածես՝ դիմէ՝ .
Օրիորդ ես , շիբ և աժան հագուիլ կուզես՝ դիմէ .
Երիտասարդ ես և շիբը կը սիրես՝ դիմէ .
Տարեց ես և ցուրտէն պատապարտելի կուզես՝ դիմէ .
Տղաքներ ունիս որոնց պիտոյքը գտնկդ կը ճառեցնեն՝ դիմէ
Ամուսնացու աղջիկ ունիս՝ ըրզակներու պէտք ունիս՝ դիմէ
Եկածը Կաղանդ , է նուէրներ գնել կը փափաքիս՝ դիմէ...
Տարին քանի մը անգամ հովանոց գնելէն զգուած ես՝ դիմէ
Ձեռքդ պարսպ ճամբայ քալել չես սիրեր՝ դիմէ .
Կուզես տունդ կոկել ճաշակաւոր կարասիներով՝ դիմէ
Առաջնակարգ և տոկուն գուլպաներու պէտք ունիս՝ դիմէ
Կուզես շիբ , ճաշակաւոր և լաւ տեսակ փողկապներ ու-
նենալ՝ վերջապէս կուզես ոտից ջգլուիս հագուիլ , շքուիլ ,
պճնուիլ

Դիմէ միմիայն

“ՀԷՐՃԱՅԻ” ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՄԵՍ ՇՈՒԿԱՅ, ԳՈՂՈՒՄՃԸԼԱՐ ՓՈԳՈՅ ԹԻՒ 13
ուր պիտի գտնես ամէն տեսակ հագուստի ,
ձերմակեղէնի , ֆանթէզիի , աղամանդի ,
ժամացոյցներու , չղթաներու և ամէն տեսակ
կարասիներու ձոխ մթերք մը :

ՎՃԱՐՄԱՆՑ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ գնողներու համար հարիւ-
րին 20 կանխիկ և մնացեալ գումարին հա-
րիւրին 5ը չաքաթական վճարմամբ .
2. Կանխիկ գնողներու համար հարիւրին
5 զեղչ .
3. Կանխիկ ծախուած ապրանքներէն մի-
միայն աղամանդեայ դոհարեղէնները երբ
գործածուած բայց անվնաս մնացած ըլլան ,
հարիւրին 10 զեղչով , իսկ ապառիկ ծախ-
ուած և անվնաս մնացած միմիայն աղաման-
դեայ դոհարեղէններն ալ հարիւրին 15
զեղչով ետ կ'առնուին :

ՍՍ.ԿԱՐԿՈՒԹԵՒՆ 24ԱՅ

17—30

ԼՈՒՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

Անոնք որ ինձ պէս աչքեր ունին սուր ,
— հոսք մեջերնիս , անոնք ո՛ւր , ես ո՛ւր —
Տեսան անուշ քե սա Բարկենդանին ,
Մարդեն սկսեալ մինչեւ . . . կենդանին ,
Փողոցի մը կամ սան մեջ , ցիրուցան ,
Իրենց հանդիպի ժամերն ունեցան ,
Ու վարժապետներն իսկ մեր կամացուկ
Տարիով երսուն , քառսունն իսկ անցուկ ,
Կերան , խմեցին , ցատեցին ու պար
Մարեցին յանախ , ձեւերով տպար ,
Մինչ վարժուհիներն ալ իրենց կարգին
Խնդուքեամբ մ'անլուր , անչափ , անագին ,
Կուսակ առ կուսակ , եւ կամ դեզ առ դեզ
Օտեղի մեջ եկան ի հանդէս ,
Կարգալով գովես սա՛ Արեւելին ,
Որ շատ խայտացուց իրենց նուրբ հոգին ,
Պատշապանելով դասն իրենց այն վերջին
Ուժովը բոլոր այս կամ այն գրչին :
Հիմա որ սակայն , շաբաթ մ'ի վեր
Մեծ-Պահն ամենուս կը կարդայ հրաւեր
Ձեռք առնել մի մեծ անսայթափ աւել ,
Ու մեր սա գործած մեղքերնիս քաւել ,
Ասեմի մ'համար քողով պարն եւ ա՛լ
Ողջերք մը մաղթել առ շի՛ Բառնալայ
Եւ բոլոր ասոնց փոխան արտառոց
Հետեւիլ կեանքին անմեղ արդարոց ,
Այսինքն կարդալ Սաղմոս եւ մի քիչ ,
Միտի տեղ լուբիս ուտել մորմոքիչ ,
Ապաշխարութեան յարիլ ի մի բան
Եւ բնաւ չը տեղի ուղղութեան նամբան ,
Կ'արժէ որ անուշ ես ալ այս օրէն
Նուիրուիմ գործիս ձեռնհասօրէն ! ,
Ու զալ ձեզ լուրեր , անտի եւ աստի ,
Թարմ եւ անարեւ , յաղբեց հաւաստի :

Խաչատուրեան Սուրբ Հայրն Արիստակէս ,
Որուն սիրն երբ կոտրես , խորտակես ,
Հանդերձեալ կեանքին մեջ , ո՛հ , շեշակի ,
Դժոխք կը չըլես աւանց կասակի ,
Եւ որ մինչեւ ցարդ , comme dans sa maison
Կ'ապրէր անսայթափ ո՛հ , ի Տրապիզոն
Հիւանդ ըլլալուն համար շարունակ ,

Շաբթուս մեջ Պոլիս հասաւ պարզունակ ,
Ուր պիտ'ստանայ խնամք , որով այն :

Բարոզչի մը պէս վրսեմ , պերճաբան ,
Երկանեան ծանօթ եֆենսին Սեփան ,
Որ իբր Իզմիրեան խիզախ քղապից ,
Իր քաղաքացուց գրչով կուսայ կից ,
Շաբթուս կը մեկնի դէպ ի Եգիպտոս
Օղն ըլլայ քորեազ եւ կամ քե յօսու :

Իր տիպարներովն անգին եւ անբաւ ,
Գրականութեան մեջ մեծահամբաւ ,
Չեղբեկեան Սիմօն եֆենսին մեր ժի՛ր
Որ գովեսներէ երբե՛ք չ'ախորժիր ,
Եւ Մանգուսէի մեջ լուռ օրն ի բուն
Կ'արտադրէ տղեր , պարզ ալ բանիբուն ,
Ասաբազարէն , նամբով մը շիտակ ,
Հասաւ ի Պոլիս լիայիւտեան :

Անոնք որ անկեղծ ոգով մ'անխրսիւր ,
Հանրագիտակիս մեջ , խիտ ուշադիր ,
Տըւած լուրերուս բոլորին հանդէպ ,
Անխախտ հաւատք մը կը տալենք քսեպ ,
Եւ հետաքրքիր աչքերով յսա՛կ
Կը կարդան ամբողջ յանգերս անսակ :

Արմատու վանքին բազմամեայ մօտակ
Եւ իր ձիրքերովն ազնիւ , անուշակ ,
Պահապան՝ Ջափար Էմմին ժաշան ,
Որ վանքին մեջ շատ կը սիրէր թաշան ,
Նախընթաց շաբթու հանգէ՛ր է ի Տէր
Եւ իր ետեւէն լացեր են , շատեր :

ԳՈՀԱՐՄԱՏԵՆԻԿ հայ տղոց , որ կը պա-
րունակէ բարոյական գեղեցիկ պատմու-
թիւններ , նկարագրութիւններ եւ տոհմային
սովորութիւններ , պարեր ու խաղեր :

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
տղոց տարիքին յարմարեցուած միակ դիւ-
րուսոյց քերականութիւնն է պատկերներու
վրայ սովորեցնող :

Գին Ա. մասին 50 փարա , Բ. մասին 100
խիկ Գ մասին 4 դրուշ :

Կեդրոնատեղին է ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ :

Մերձան փողոց թիւ 57

«ՀԱՆՐԱԳԻՏԱԿ»-Ի ԹԵՐԹՕՆԸ Ե

Հեղինակ՝ ԼՈՒԻ ՊՈՒՍԵՆԱՌ

Թարգմանեց՝ Յ. ՏԵՐ-ՅԱԿՈԲՅԱՆ

10,000 ՏԱՐԻ

ՍԱՌՆԱԿՈՅՏԻ ՄԸ ՄԷՁ

Մերունի Ձինացին հետեւեալ կերպով պատասխանեց Մ. Սէնթէզի հետաքրքիր հարցումներուն :

— Կը հարցնէք թէ ո՞վ ենք մենք, ո՞ւր կից առաջ եկած ենք : Մենք զտուած, մաքրուած, դարերու ընթացքովը դանդաղ բայց չարունակական խառնածնութեամբ մը առաջ եկած ենք երկու ցեղերէ, սեւ և դեղին ցեղերէն : Հիմա պիտի հասկնաք թէ ի՞նչպէս տեղի ունեցած է այս փոփոխութիւնը որ մեզի այս վիճակին մէջ դրած է : Հարկաւ գիտէք թէ ի՞նչ վիճակներէ կ'անցնի պարզ ըջիջ մը, մինչեւ որ ամենակատարեալ էակին՝ մարդուն վարածուի ան : Այս առաջ դիմութիւնը ո՞չ կեցած, ո՞չ իսկ դանդաղած է : Ո՞րն է յեր այն գործարանը որ անդադրում օգտուած է այս առաջդիմութեանէն . . . :

— Ուղեղը . . . Կենդանական ցեղին մէջ ի՞նչ փոփոխութիւններ եղած են անգլուխ էակներէն մինչեւ մարդը :

— Եւ ձեր ժամանակուան մարդերէն մինչեւ մեզի 10,000 տարի անցած են : Պէտք է աչքի առջիւ ունենալ այս :

— Ճիշդ է :

— Կը տեսնէք թէ մեր քով ուղեղը ամէն ինչ գերազանցած է : Ըսիք թէ ի՞ր դանգուածին բարգաւաճումը այնքան արտակարգ է որ տձեւութեան կը հասնի : Հաղիւ թէ մարմին ունինք, ա՛յնքան հսկայական է մեր մէջ միտքին նախապատուութիւնը : Այսպէս, արդար կերպով կրնանք ըսել թէ 11,886 տարւոյն երկիրին բնակիչները մեծ մասամբ ուղեղայիններ են :

— Մեծ մասամբ, ըսիք. ուրեմն ձեռք զատ ուրիշ ցեղ ալ կայ :

— Անտարակոյս և դուք պիտի տեսնէք այդ ցեղին մարդիկը որոնք անասունի կը նմանին աւելի, դէպի անասնական վիճակ վերադարձած են : Ասոնք Մաօ-Չիններն են, թանձրամազ մարմին ունեցողները որոնք զանազան տեսակէսներով կը մօտենան ձեզի :

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

— Է ուրեմն, Շիէն-Շունկ (Նախածին, Մ. Սէնթէզ) ինչպէս կը գտնես ինքզինքդ :

— Շիտակը, շատ աղէկ Թա-Լաօ-Են (Մեծ-Մերունի-Պարոն) :

— Ո եւ է պէտք չէ՞ք զգար սնունդ առնելու :

— Ոչ մէկ կերպով :

— Այսուհանդերձ համաններ տուինք որ թանձրամազներու գործածած սնունդներուն պէս կերակուրներ պատրաստուին ձեզի համար :

— Հաւանաբար բանջարեղէններ, միս :

— Անտարակոյս :

— Սա ըսեմ ձեզի թէ ես ուրիշ մարդոց պէս չեմ անանիւր : Իմ կեանքիս երկրորդ կէսին միջոցին քիմիական կերպով զտուած սնունդ կ'առնէի, այսինքն ձեր ինծի համար պատրաստած կերակուրներուն նախնական տարրերը կը հանէի :

— Դժուար կ'ընէիք այդ բանը :

— Անտարակոյս : Այս բանին մէջ արտակարգ ի՞նչ կայ որ . . . պատասխանեց Մ. Սէնթէզ իր մտքի կարողութեան վրայ վրաստան մարգու մը շեշտերով :

— Բայց . . . ձեր այդ ըրածը ճիշդ մեր այժմու սնունդն է : Եւ դուք զայն հնարած էիք տասը հազար տարի առաջ . . . :

— Ճշմարիտ, Մեծ-Մերուհի-Պարոն։ Ասկից դատ, ես ինքս էի՝ որ կը պատրաստէի այդ տարրաբանական սնունդները։

— Ինչ որ կ'ըսէք շատ զարմանալի է, Շիէն-Շունկ։ Ուրեմն արեւին տակ նոր բան չկայ։

— Հէ՛ . . . աւելին ըսե՛մ ձեզի, մենք ալ մեր ժամանակները բառ առ բառ կը գործածէինք այդ խօսքը, զոր հիմա արտասանեցիք . . . :

— Բայց արդեօք մինչեւ 10,000 տարի առաջուան մարդիկը թշուառ էակներ չէին, հազիւ անասնական վիճակէն քիչ մը բարձր . . . :

— Ինչե՛ր կ'ըսէք Մեծ-Մերուհի-Պարոն . . . : Մենք ընդհակառակը շատ առաջացած քաղաքակրթութիւն մը ունէինք և կը զարմանամ որ չէք հանդիպեր մեր դարուն մնացորդներուն որոնք սփռուած էին ատենօք մեր ժամանակներուն բնակուած երկիրներուն վրայ։

— Կը սխալիք։ Այդ մնացորդներէն, յիշատակներէն կան։ Բայց ասոնք մետաղական խոշոր առարկաներ են, որոնց ինչ բանի գործածուիլը չենք կրնար երեւակայել։ Այս պատճառով բնական է թէ գաղափար կազմած էինք որ նախապատմական մարդոց մտաւորական կարողութիւնը շատ բարձր վիճակի մը մէջ չէր գտնուեր։

— Պիտի տեսնեմ ձեր հաւաքածոները և շատ ուրախ պիտի ըլլամ մասնաւոր տեղեկութիւններ տալով ձեզի այս հնօրեայ բեկորներուն վրայ։ Կարելի է ձեր նախապաշարումները փարատեմ այսպէս . . . ո՞վ պիտի կրնար ըսել ինծի թէ օր մը ես ալ նախապատմական մարդ մը պիտի ըլլայի և պիտի պարտաւորուէի մեր յաջորդներուն սովորեցնելու թէ ի՛նչ էինք մենք 19րդ դարուն։

Մ. Սէնթէզ անտարակոյս աւելի երկար պիտի շարունակէր եթէ այս միջոցին չմօտենար միջահասակ, խոհական ընթացքով մարդ մը որ գորշ, կոշտ պլուզ մը հագած էր, մէջքէն սեղմուած, և վարտիքի նմանող տաբատ մը, ճիշտ ֆրանսոցի գիւղացիներուն հագած տորազին պէս։ Այս մարդը որ գլխաբաց էր և մերկոսն, երկու ձեռքով ընկած էր մեծ ափսէ մը վրան մետաղէ բաժակով մը։ Մարդը կեցաւ Մեծ-Մերուհի-Պարոնին մեղմ մէկ սուլումին վրայ։

— Ահաւասիկ Մաօ-Չին մըն է այս մարդը յարեց ձերունին։

— Բայց, միջամտեց Մ. Սէնթէզ որուն զարմանքը տակաւ կը մեծնար. այս մարդը որուն դուք «Թանձրամաղ» անունը կուտաք փոխանակ Այնոյի որով մենք կը յորջորջէինք Արեւելեան Ասիոյ կղզեբնակները, ոչ մէկ յատկանիշ ունին իրենց վրայ այդ նախնական ցեղին նկարագիրէն։ Ասիկայ ճերմակ է, ճերմակ ինծի չափ, մորուօք, մազոտ այնչափ որ կը յիշեցնէ այժմ անծանօթ և անյայտ Տմեր Եւրոպային բնակիչներուն տիպարը։

— Յեղ մը որ սակայն շատ պատուէ ինկած է։ Ինչպէս կը տեսնէք մեր մօտ ծառայութիւն կ'ընեն։ Նայեցէք սա պզտիկ գըլուխը, նեղ ճակատը, դէպի վար ծռած վիզը, լայն ռոտքերն ու ձեռքերը և սա անդամները որոնց միսերը անասունի միսի կը նմանին . . . հազիւ կրնայ խորհիլ ան։ Կաղկանձելով կը խօսի, որկրամոլութեամբ կուտէ, կենդանիի անկուշտութեամբ կը խըմէ, իր նմաններուն հետ կը կռուի և չվարանիր զանոնք սպաննելու, երբ գինովութիւնը և կատաղութիւնը զայն բորբոքած են։ Ասկից զատ անոր համար անկարելի է բաժնուիլ գետնէն որուն կապուած է իր թըշուառ կեանքին բոլոր տեւողութեան ատեն, բարձրանալ իր շնչած շրջանակէն վեր, խոյանք մը ունենալ. այլ բռնադատուած է տեղէ մը ուրիշ տեղ երթալու համար փոխնի փոխ շարժել իր սրունքները . . . : Էակ մըն է ան, կ'ընդունիմ երբեմն կենդանիներուն ամենէն կատարեալը, բայց այսօր մարդ կոչուելու արժանի էակներուն մէջ ամէնէն ստորինը . . . :

— Եւ ըսել թէ, մրմնջեց Մ. Սէնթէզ տխրօրէն, և ըսել թէ դարերու ընթացքին մէջ զտուած, կատարեալագործուած այս ուղեղայիններուն առջեւ ես տեսակ մը նախապատմական մարդակերպ եմ, մարդ-կապիկէն քիչ մը աւելի կատարեալ, զոր ժամանակաւ կը փնտռէինք Տարվինի վարդապետութիւնը հաստատելու համար . . . : Բայց ինչ տեսակ էակներ են այս ուղեղայինները . . . Պահ, հիմա կը հասկնամ . . . :

(Շարունակելի)

Արտօգրաւէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Տպագրութիւն Մ. ՍԱՐԳԵԱՆ

Պապ-Ալի հասցէսի Թ. 38

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՏԵՐԶԵՆԱԳ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուրբան Հանում, Թօփուպեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանայ տուկունութեամբ և գիներու անմրցելի աժանութեամբը շահած է բոլոր իրեն գիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձեռնադրան յատուկ ընտիր հաճութաներու, կանանց թէյրոհիւններու և տղայոց շիք և գիմացկուն ֆօքսիւններու ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն տնոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հաճութիւն և ուրիշ նմանօրինակ պիտոյից .


Սակարկութիւն չկայ, թիւը 2 դրշ է. Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին .

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԵՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԵՒ

ՀՈՏԱՒԷՏ ԹԵՅԵՐ

Կ. Պոլիս, ՊահճեԳափու, Ճէլալ-Պէյ խան, քիւ 10



Ա Ն Տ Ե Լ Ի Պ
Վ Ա Ժ Ա Ռ Ա Տ Ո Ւ Ն
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՒԱԳԱՐԱՆԱՅ ԵՒ ՊԵՏՈՅԻՑ

ՄԱՍՆԱԴՈՐԱԲԱՐ

Ֆոնոկրաֆի Է. Գլաններու. Կրամֆոնի
Է. Էրկկոլմ Բլազներու. Կեդրոնա-
տեղի Պահճե Գաբու, Հաճի Պէքիբ
Էֆենտիի կից, Շալտըզ խանի տակ
քիւ 2: Մասնաճիւղ Պահճե Գաբու
քիւ 52:

Վաճառատանս
30 տարիներէ
ի վեր ծախած
ապրանաց տո-
կունութեան և
թէ նորոգու-
թեան մասին
չահած համբա-
ւը բազմաթիւ

յաճախորդներուն ծանօթ ըլլալով, կը փութանք յայտարարել թէ՛ այս անգամ նոր
գրութեամբ և կատարելագործեալ լու տեսակ Կրամֆոններ և երկու կողմն ալ զատ
զատ եղանակներով Բլազներ բերել տուած ենք, և կրնանք մրցիլ հրապարակի վրայ
գտնուած բոլոր նմանօրինակ ապրանաց հետ, թէ՛ տոկունութեամբ, ճայնի առաւելու-
թեամբ և թէ՛ աժանութեամբ: Գաւառներէն եղած յանձնարարութիւնք կը կա-
տարուին ամենայն ուշադրութեամբ և հոգածութեամբ:

Անգամ մը փորձելը բաւական է հաստատելու համար մեր ըսածները Դիմել՝
կեդրոնատեղին: